
Անի Սարգսյան, Ալեքսանդր Սաֆարյան, Լուսինե Սահակյան,
Օսմաներենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 324 էջ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոսները Հայաստանում առաջին անգամ հրատարակել են օսմաներենի դասագիրք, որը հնարավորություն է ընձեռում թե՛ ուսանողներին և թե՛ թուրքագետներին տիրապետել այդ լեզվին: Օսմաներենի կարևորությունը հայրենական թուրքագիտության համար դժվար է գերազնահատել, քանզի հայ ժողովրդի պատմության մի զգալի ժամանակաշրջանն ուղղակիորեն առնչվում է Օսմանյան կայսրության պատմությանը:

Օսմաներենի իմացությունը կարևոր է հատկապես Հայոց ցեղասպանության ավելի խոր և համակողմանի ուսումնասիրության համար, քանի որ օսմանյան արխիվներում պահվում են տասնյակ հազարավոր փաստաթղթեր, որոնք առնչվում են Արևմտյան Հայաստանի պատմությանը, մասնավորապես օսմանյան տարբեր վարչակարգերի պարբերաբար իրականացրած կոտորածներին և ցեղասպան քաղաքականության կարևոր դրվագներին:

Ա. Սարգսյանի, Ալ. Սաֆարյանի և Լ. Սահակյանի հեղինակած դասագիրքը շարունակում է օսմաներենի ուսումնասիրության այն ավանդույթը, որը հայ իրականության մեջ հիմնադրել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը¹: Այն գիտական, ինչպես նաև ուսուցողական բացառիկ աշխատանք է, որը նախատեսված է ուսանողներին օսմաներենի հնչյունական, քերականական, բառային համակարգերի առանձնահատկությունները հնարավորինս պարզ ու մատչելի մատուցելու համար:

Գրախոսվող դասագիրքը՝ որպես ինքնուսույց, օգտակար կարող է լինել նաև համապատասխան մասնագետների համար: Ներածությունում հեղինակները մանրամասն և հանգամանալից ներկայացնում են օսմաներենի բնույթը՝ այն բնորոշելով որպես թուրքերեն, արաբերեն ու պարսկերեն կենդանի լեզուների «համակցություն»: Դասընթացն ընդգրկում է երեսուներկու դաս, որոնք աչքի են ընկնում կառուցվածքային համաչափությամբ. յուրաքանչյուր դաս բաղկացած է երկու բաժնից, որոնցում հեղինակները նախ ներկայացնում են օսմաներեն այբուբենի գրության և արտասանության կանոնները, քերականական գործառույթները, այնուհետև հեղինակներն ամե-

¹ Տե՛ս **Փափազյան Ա.**, Օսմաներենի ձեռնարկ (քերականություն և ընթերցանություն), Երևան, 2012:

նայն հետևողականությամբ, նյութի համակողմանի ուսումնասիրությամբ, արաբերենի և պարսկերենի քերականությունների համադրությամբ շարադրում են օսմաներենի քերականությունը: Յուրաքանչյուր դասի վերջում գետեղված են տվյալ քերականության յուրացումն ամրապնդող և ըստ էության թեման ամփոփող վարժություններ, ինչպես նաև համառոտ բառացանկեր, ինչը կարևոր է որպես ուսուցման մեթոդ, քանզի այս կերպ սովորողի ուշադրությունն ուղղակիորեն հրավիրվում է դասի առանցքային կետերի վրա:

Դասագրքի օգտագործումն առավել հարմարավետ է դարձնում օսմաներեն-հայերեն ուսումնական բառարանի ընդգրկումը, որը, անտարակույս, հեղինակների արժանիքներից է: Հավելվածում ամփոփված են տարբեր դարաշրջանների արձակ և չափածո տարաբնույթ ստեղծագործություններ, մասնավորապես Բաքիի, Նեղիմի, Մեհմեդ Էմինի, Ջիյա Գյոքալփի, Յահյա Քեմալի բանաստեղծություններից: Դասավանդման բազմամյա փորձ ունեցող հեղինակները, փաստորեն, ուսուցման դիդակտիկ մեթոդի յուրատեսակ կիրառմամբ հնարավորություն են ընձեռել ծանոթանալ թուրքական գրականության լավագույն նմուշներին բնագրերով:

Հարկ է շեշտել նաև Ա. Սարգսյանի, Ալ. Սաֆարյանի և Լ. Սահակյանի դասագրքի հանրամատչելի ոճը. նյութը շարադրված է պարզ լեզվով, ոչ միայն ակադեմիական ճշգրտություն, այլև դյուրընկալ ձևակերպումներով:

Եզրափակելուց առաջ փաստենք, որ գրախոսվող դասագիրքը լեզվաբանական գիտական լուրջ և արժեքավոր աշխատանք է, որն առանձնանում է իր բարձրորակությամբ՝ թե՛ դասընթացի կորիզն ամփոփող գործնական առաջադրանքների և թե՛ մատուցվող նյութի տեսական շարադրանքի հղկվածության ու տրամաբանական հաջորդականության առումներով:

*ԼԻԼԻԹ ՄԱՖՐԱՍՅԱՆ
ԱՆՈՒՇԻԿ ՄԱՐՏԻՆՈՍՅԱՆ*